

ՆՏԴ.911.33

Տնտեսական աշխարհագրություն

**ՇՈՒԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ
ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ**

Անահիտ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Շուկայական ենթակառուցվածք, կոլեկտիվ տնտեսություն, սեփականաշնորհում, ագրարային, պարենային, ներքին շուկա, արտարին շուկա, ցածր մրցունակություն, փոքր արտադրողներ, ներդրումներ:

Ключевые слова - Рыночная инфраструктура, коллективное хозяйство, приватизация, аграрный, пищевой, внутренний рынок, внешний рынок, низкая конкурентоспособность, малые производители, вложения.

Keywords - Market infrastructure, collective farm, privatization, agrarian, food, domestic market, foreign market, low competitiveness, small producers, investments.

**НЕКОТОРЫЕ ФАКТОРЫ, ПРЕПЯТСТВУЮЩИЕ РАЗВИТИЮ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА НКР
В РЫНОЧНЫХ УСЛОВИЯХ**

Анаит Григорян

В статье представлены факторы, препятствующие развитию сельского хозяйства Республики Арцах, анализ существующих недостатков и упущений. В сфере сельского хозяйства явной проблемой является небольшой размер и разрозненность хозяйств. Это мешает процессу использования новых технологий и навыков, что, в свою очередь, влияет на качество продукта, становится причиной низкой конкурентоспособности на рынке. Для решения этих проблем предлагается использовать международный опыт.

SOME IDEAS OF OBSTACLES IN DEVELOPMENT OF AGRICULTURE OF NKR IN MARKET CONDITIONS

Anahit Grigoryan

The factors interfering development of agriculture of the Artsakh Republic, the analysis of the existing shortcomings and omissions are presented in the article. The small size and separation of farms appears to be an obvious problem in the sphere of the rural economy. It interferes with the process of use of new technologies and skills that, in its turn, influences the quality of a product, becomes the reason of low competitiveness in the market. It is offered to make use of the international experience for the solution of these problems.

Նորվածում ներկայացված է Արցախի հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոնների, առկա թերությունների և բացթողումների վերլուծությունը: Գյուղատնտեսական բնագավառում ակնհայտ խնդիրներից են համարվում տնտեսությունների փոքրությունն ու կտրտվածությունը: Այս հանգամանքը դժվարացնում է ագրոհամակարգում նոր տեխնոլոգիաների և հմտությունների օգտագործման գործընթացը, որն ազդում է ապրանքի որակին, պատճառ դառնում շուկայում գյուղատնտեսական արտադրանքի ցածր մրցունակությանը: Այս խնդիրների լուծման համար առաջարկվում է օգտագործել միջազգային փորձը:

Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող և արգելափակող որոշ պատկերացումների մասին վերլուծության նպատակն է երևան հանել այն թերություններն ու բացթողումները, որոնք կնպաստեն առավել ճիշտ և արդյունավետ ուղիներ փնտրել շուկայական ենթակառուցվածքները զարգացնելու ու գյուղատնտեսական մթերքներ արտադրողների համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

1991թ. «Գյուղացիական և գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքն ընդունելուց և հապճեպ սեփականաշնորհում իրականացնելուց հետո Արցախի իշխանավորների մոտ ձևավորվեց այն համոզմունքը, որ նոր բարեփոխումների ալիք կբարձրանա ագրարային ոլորտի կարգավորման գործընթացում: Սակայն քաղաքականություն մշակողները կամ չգիտեին ինչպես պետք է անել, կամ միամտաբար կարծում էին, որ շուկան կկարգավորի ամեն ինչ:

2016թ. տվյալներով Արցախում զբաղվածների մոտ 28.1%-ն ընդգրկված է գյուղատնտեսական արտադրության ոլորտում՝ ապահովվելով համախառն ներքին արդյունքի 13.2%-ը [7]:

Ագրարային ոլորտի զարգացման ռազմավարության հիմնական նպատակն է նպաստել հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանը, պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը և գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը՝ գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով: Հիմնական նպատակից բխող ենթանպատակներից են գյուղմթերքի արտադրության ծավալների ավելացում և արտադրության եկամտաբերության բարձրացում, գյուղատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործում, սննդամթերքի անվտանգության հիմնախնդիրների լուծում, գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացում, գյուղատնտեսության հարկային և վարկային համակարգի բարելավում:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին բավականին աճ է գրանցվել առաջին անհրաժեշտության մի շարք պարենամթերքների արտադրության բնագավառում: Այսպես՝ Արցախի հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը՝ 2016թ. տվյալներով հանրապետությունում արտադրվող վերը նշված ապրանքների արտադրությունը բավարարում է բնակչության ներքին պահանջարկի մեծ մասը (կաթ՝ 95,5%-ը, ձու՝ 84,6%-ը, թռչնամիս՝ 78,3%-ը, տավարի միս՝ 82,5 %-ը, խոզի միս՝ 73,3 %-ը, ոչխարի միս՝ 100 %-ը, ձուկ՝ 3 %-ը): [6]: Վերջիններս վկայում են առաջին անհրաժեշտության պարենամթերքի ներմուծումը որոշակի հիմնավորված սահմաններում տեղական արտադրությամբ փոխարինելու կարևորության մասին: Դրան հնարավոր է հասնել տեղական արտադրության մթերքի որակի ու մրցունակության բարձրացման և արտադրության ծավալների ավելացման միջոցով: Այդ նպատակով նախատեսվում է՝ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսության բնագավառում տնտեսվարողներին աջակցության ցուցաբերում՝ անասնապահության, բուսաբուծության, գյուղմթերքի վերամշակման բնագավառում առաջադիմական և արդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված խորհրդատվության, մատչելի պայմաններով արտոնյալ և նպատակային վարկերի ծավալների ընդլայնման և ներդրումների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով: Կարևոր է նաև ագրարային ոլորտի տեխնոլոգիաների գնահատման ծրագրերի իրականացումը կարևորագույն համարվող բնագավառներում, մասնավորապես մշակաբույսերի նոր սորտերի մշակության արդյունավետ տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող և շուկայական պահանջարկ ունեցող մշակաբույսերի ներդրում: Ոլորտում պետք է ներդրվեն նաև անասունների բուծման, խնամքի և կերակրման արդյունավետ տեխնոլոգիաներ:

Արցախի հանրապետությունը արտերկրից պարենամթերքի ներքին շուկա մուտք գործելու հնարավորության տեսանկյունից համարվում է ազատական շուկա ունեցող երկիր: Հանրապետություն ներմուծվող, թարմ և վերամշակված սնունդ արտադրող տնտեսվարող սուբյեկտների բազմազանությունը, դրանց կողմից տարբեր տեխնոլոգիաների կիրառումն ու սննդամթերքի անվտանգության վերահսկման ամբողջական համակարգի բացակայությունը լուրջ վտանգ են ստեղծում սպառողների առողջության համար: Սննդի անվտանգության անհրաժեշտ ստանդարտների համապատասխանության պարագայում կբարձրանա Արցախի հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի մրցակցությունը, որի համար գյուղատնտեսական և ագրոպարենային հատվածը պետք է կարողանա նաև արդյունավետ կերպով արձագանքել տեղական սպառողների՝ սննդամթերքի անվտանգությանն առնչվող պահանջներին և մրցակցել ապրանքների, իսկ արտահանման դեպքում՝ արտասահմանյան ապրանքների որակական ստանդարտների հետ:

Միջազգային շուկա մուտք գործելու նախադեպ է նաև Արցախի հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացումը, ինչպես նաև սննդամթերքի որակի բարելավումը: Այս պարագայում անհրաժեշտ է ներկայացնել երաշխիքներ, որ սննդամթերքներն արտադրվել են այնպիսի վայրերում, որտեղ չկան որոշ տեսակի վնասատուներ և հիվանդություններ. գործում են սննդամթերքի արտադրության, փաթեթավորման և առաքման հիգիենայի տարրական կանոնները, կամ որ պնտիցիդների կամ անասնաբուժական դեղերի մնացորդները և շրջակա միջավայրի աղտոտիչները սննդամթերքում չեն գերազանցում իրենց թույլատրելի չափերը: Արտահանող երկիրը և արտադրական ամբողջ ճյուղը պետք է համապատասխանեն այս պահանջներին և, շատ դեպքերում, նաև ապացուցեն, որ համապատասխանությունն ապահովված է: Սննդամթերքի անվտանգության և բույսերի ու կենդանիների առողջության վերահսկման կարողությունը շատ կարևոր է ոչ միայն արտահանման համար սահմանված պահանջներին համապատասխանություն ապահովելու, այլ նաև ներկրվող

և տեղական արտադրության գյուղատնտեսական և պարենային ապրանքների նկատմամբ արդյունավետ հսկողություն իրականացնելու համար: Մենդի անվտանգության համակարգի զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ սննդամթերքի որակի և անվտանգության հսկողության գործընթացի կազմակերպման համար փորձաքննություն անցկացնող լաբորատորիաների ստեղծում և ուժեղացում՝ ապահովելով դրանց տեխնիկական հագեցվածությունը, համապատասխան կադրերի ուսուցումը և վերապատրաստումը: Մենդի անվտանգության համակարգի զարգացումը կնպաստի պարենամթերքի որակի բարելավմանը և արտահաման խթանմանը, արդյունքում կբարելավվի պարենամթերքի ապրանքաշրջանառության հաշվեկշիռը:

Ագրոպարենային հիմնախնդիրների լուծման գործում կարևոր է գոտիական մասնագիտացումը և արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը: Գյուղատնտեսության արտադրական գործոնների արդյունավետ օգտագործումը, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ հիմնավորված քաղաքականության կիրառումը և գյուղական աղքատության հաղթահարումը պահանջում են բազմակողմանիորեն հիմնավորված գոտիական մասնագիտացում և արտադրության արդյունավետ տեղաբաշխում: Ազատական տնտեսության պայմաններում այս գործընթացները կարգավորվում են շուկայական գործոններով, բայց նկատի ունենալով հիմնախնդիրների ռազմավարական նշանակությունը, անհրաժեշտ է, որ պետությունը տարածքային զարգացման քաղաքականության շրջանակներում անուղղակիորեն նպաստի արտադրության մասնագիտացմանը և արդյունավետ տեղաբաշխմանը [2]:

Նոր տնտեսահարաբերություններով պայմանավորված՝ ագրարային ոլորտի վերափոխումների ընթացքում, պայմանավորված տարբեր սոցիալ-տնտեսական գործոններով, նկատելի կերպով խաթարվել է գյուղատնտեսական գոտիների մասնագիտացումը, ինչի հետևանքով ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը զգալիորեն նվազել է, կրճատվել են միավոր տարածությունից ստացվող համապատասխան արտադրանքը և աշխատանքի արտադրողականությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի հանրապետությունում առանձնացված գյուղատնտեսական գոտիները չեն համընկնում ըստ շրջանների բաժանմանը՝ կառավարելիության տեսանկյունից գոտիական մասնագիտացումը և արտադրության տեղաբաշխումը նպատակահարմար է ներկայացնել ենթաշրջանների կտրվածքով:

Ըստ գյուղնախարարության ներկայացրած ռազմավարական ծրագրի՝ նախատեսվում է նաև գյուղատնտեսության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման քաղաքականության իրագործում, որի հիմնական ուղղություններն են՝ շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրավորումը, նպատակային վարկավորման և մարքեթինգային աջակցության միջոցով փոքր և միջին ձեռնարկատիրության աշխարհագրության ընդլայնումը, միջշրջանային տնտեսական ինտեգրացման խթանումը և զարգացումը, շուկայական ու արտադրական և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ճանապարհով ներդրումային պայմանների բարելավումը և այլն: Նախարարության կարևոր հաջորդ ծրագիրը սահմանամերձ բնակավայրերի տնտեսական և սոցիալական զարգացման համալիր աջակցությունն է, ինչի նպատակով էլ փորձում են իրականացնել մի շարք միջոցառումներ: Դրանցից առաջնայինն ու գլխավորը սակավաբնակ բնակավայրերի ամրապնդումն է, որի միջոցով կավելանա գյուղընդհատում աշխատողների թիվը, ինչն էլ իր հերթին կբերի պարենամթերքի արտադրության ծավալների ընդլայնման և ինչու չէ նաև որակի բարձրացման՝ միաժամանակ լուծելով բնակչության աշխատունակ զանգվածի զբաղվածության խնդիրը: Հաջորդ կարևոր քայլն է տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների ցանցի, տեղական նշանակության ճանապարհների ցանցի ընդլայնումը:

Ագրոպարենային հիմնախնդիրների լուծման գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև հողաբարելավումն ու շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության մեղմացումը: Հանրապետության համար մեծ նշանակություն ունի հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացումը, որոնց կարևոր բաղադրիչներից են ոռոգման համակարգերի և հողերի բարելավման միջոցառումները: Վերջիններիս կուղղվեն վարկային և ԱՀ պետական բյուջեյից ֆինանսավորվող մի շարք ծրագրեր: Նմանատիպ ծրագրերի իրագործումը կնպաստի ոռոգման համակարգերի մեխանիկական եղանակից ինքնահոսի անցմանը, նոր և ավելի մեծ տարողությամբ ջրամբարների կառուցմանը, ոռոգման համակարգերի կառավարման կառուցվածքի կատարելագործմանն ու տեխնիկական վիճակի բարելավմանը: Այս գործընթացների հիմնական և կարևորագույն նպատակն է ԱՀ ագրոարդյունաբերության ճյուղում ոռոգման նոր համակարգերի և նոր տեխնոլոգիաների ներդրումը, որը կնպաստի ջրի արդյունավետ օգտագործմանը: Բացի հողաբարելավման գործընթացներից, ագրոարդյունաբերության մեջ մեծ է օրգանական

գյուղատնտեսության զարգացումը, որի համար պետք է ստեղծվեն նախապայմաններ և իրավական հիմքեր, իսկ դրա համար հարկավոր է ուսումնասիրել միջազգային փորձն ու ձեռքբերումները: Օրինակ՝ միջազգային շուկայում, հատկապես զարգացած երկրներում, տարեցտարի աճում է պահանջարկը ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված օրգանական պարենամթերքի նկատմամբ: Օրգանական գյուղատնտեսական արտադրությունը հիմնված է կայուն և հավասարակշռված ագրոէկոհամակարգերի ստեղծման, պահպանման, ադոտոտող տեխնոլոգիաների օգտագործման բացառման, քիմիական նյութերի կիրառման խիստ սահմանափակման, բույսերի տնտեսների, ինչպես նաև կենդանիների ցեղերի կենսաբազմազանության ավելացման և հողի բնական բերրիության բարձրացման և այլն: Այս բնագավառում արգելվում է գենետիկական վերափոխված օրգանիզմների և դրանց ածանցյալների, ինչպես նաև ժամանակակից որևէ կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառումը:

Անասնաբուժական ծագման մթերքի և դրա վերամշակումից ստացվող օրգանական սննդամթերքի արտադրության համար կարևոր նախադրյալ է երկրի ալյալան և ենթալյալան գոտու արտավայրերի առկայությունը: Հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության ձևավորման ու զարգացման համար անհրաժեշտ է մշակել և գործողության մեջ դնել «Օրգանական գյուղատնտեսության մասին» ԼՂՀ-ի օրենքը, որը սահմանելու և կարգավորելու է օրգանական գյուղատնտեսության հիմնական սկզբունքները, տնտեսվարողների պարտականությունները և այլն: Օրենքի կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել համապատասխան ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես՝ սահմանել տնտեսական գործունեության և պետական վերահսկողության կարգը, օրգանական արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջները, ոչ օրգանական ծագման նյութերի ցանկը, որոնք կարող են օգտագործվել որպես բաղադրամասեր, բուսական և կենդանական ծագման գյուղատնտեսական հումքից վերամշակված սննդամթերքի փաթեթավորման կարգը: Օրգանական գյուղատնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունի մասնավոր հատվածում համապատասխանությունը հավաստող մարմինների ձևավորմանն ուղղված աջակցությունը: Այդ մարմինները պետք է ունենան վերահսկողության համապատասխան փորձ, ռեսուրսներ, որակավորված աշխատակազմ, աշխատանքները իրականացնեն թափանցիկ և համապատասխանության գնահատման գործառնությունների իրականացման ընթացքում ապահովեն տնտեսվարողների առևտրային գաղտնիությունը: Օրգանական արտադրությանը ԱՀ-ում նպաստելու համար անհրաժեշտ է դրա արտադրության ազգային ստանդարտների մշակում և դրանց ներդաշնակեցում ընդունված չափորոշիչներին: ԱՀ-ում օրգանական արտադրության խթանման համար անհրաժեշտ է ապահովել աջակցությունը խորհրդատվության և տեղեկատվության տրամադրման ուղղությամբ:

Արցախի հանրապետությունում բուսաբուծության զարգացումը պահանջում է ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնում, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացում, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառում, բույսերի գենետիկական բազմազանության, ներառյալ՝ մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության ապահովում: Գյուղատնտեսության ռազմավարության շրջանակներում բուսաբուծության զարգացման գերակայություններից են՝

1. ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգերի ներդրման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացումը և միավոր արտադրանքի հաշվով արտադրական ծախսերի կրճատումը,
2. ցանքատարածությունների կառուցվածքի բարելավումը և միավոր տարածությունից ստացվող եկամտի ավելացումը,
3. բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի ներդրումը, մշակության ագրոտեխնիկայի յուրացումը,
4. դաշտային կերարտադրության արդյունավետության բարձրացումը և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների զգալի ավելացումը,
5. 118.3 հազ. հա վարելահողերի լիարժեք օգտագործումը, դրանից առնվազն 80.6 հազ. հա ինտենսիվ մշակությունը [2]:
6. բազմամյա տնկարկների հիմնադրում մինչև 6.9 հազ. հա, որից պտղատու այգիներ՝ 3.9, իսկ խաղողիներ՝ 3 հազ. հա:

Ոլորտում կանխատեսվող մակարդակի ռազմավարության ուղղություններից են հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան մշակության և բերքահավաքի առաջադիմական տեխնոլոգիաների արմատավորումը, որի համար նոր

տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացումը, բուսաբուծության ճյուղում բարձր ավելացված արժեքով արտադրության անցման ուղղությամբ հանրապետության տարբեր շրջաններում տեխնոլոգիաների գնահատման ծրագրերի իրականացումը, սելեկցիայի և առաջնային սերմնաբուծության գիտական ապահովում, երկրորդային սերմնաբուծության ոլորտում մասնավոր ձեռներեցության խթանում և սերմնարտադրության հավաստագրումը: Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրության և հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը: Նախատեսվում է պետքյուջեից և այլ աղբյուրներից կատարվող հատկացումների հաշվին արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցով ավելացնել բույսերի առավել վտանգավոր և մասսայական վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների ծավալները: Բուսասանիտարական առավել կայուն վիճակ ստեղծելու նպատակով բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում նաև ընդհանուր օգտագործման տարածքներում: Բուսաբուծության զարգացման համար կարևոր է բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներկրման, պահպանության ու վաճառքի գործընթացների իրավական կարգավորում և տեսչական հսկողության ուժեղացում, ինչի արդյունքում տարվող աշխատանքները կլինեն առավել նպատակային և արդյունավետ: Բուսաբուծության զարգացմանն ու առավել ևս բերքատվությանը մեծ վնաս են հասցնում տարբեր տեսակի բազմաթիվ միջատներ և կրծողներ [3]:

Դրանց դեմ պայքարելու համար նույնպես անհրաժեշտ է արդյունավետ միջոցառումների կիրառումը: Բերքատվության բարձրացմանն նպատակով նախատեսվում է գյուղտնտեսական մշակաբույսերին պատճառված վնասի չափը հասցնել նվազագույնի և կրծողների դեմ պայքար իրականացված տարածքներում դրանց տարածվածությունը կրճատել առնվազն 80 %-ով: Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացմանն նպատակով 2008-2015 թթ. ծրագրի իրականացման շնորհիվ գյուղատնտեսությունում պարարտացման արդյունավետ սխեմաների կիրառել: ԱՏ ագրարային հատվածում մշակվող և իրականացվող քաղաքականությունն աջակցելու է կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև լանդշտաֆների արդյունավետ կառավարման և ծրագրավորմանը: Գյուղատնտեսական մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության աջակցությունն իրականացվելու է հետևյալ ուղղություններով՝ մշակաբույսերի և դրանց վայրի նախնիների գենետիկ բանկի ստեղծում, բնական հանդակների բարելավում, բնական աղետների կանխատեսում և հետևանքների մեղմմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում [4]:

Ագրոպարենային հիմնախնդիրների լուծման գործում կարևոր է նաև երկրում անասնապահության և անասնաբուծության զարգացման դերը: Անասնաբուծության ճյուղերի արդյունավետ զուգակցման և ռացիոնալ տեղաբաշխման աջակցություն, տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացում, անասնաբուծության համակարգի բարելավում և անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասնաբուծության կերի բազայի զարգացում, անասնաբուծական առևտրային կազմակերպությունների զարգացմանը աջակցություն, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանության ապահովում: Ռ-ազմավարության շրջանակներում անասնաբուծության զարգացման գերակայություններն են թարմ կաթի և կաթնամթերքի, թռչնի, մսի և ձվի նկատմամբ հանրապետության ներքին շուկայի պահանջարկի ամբողջական բավարարում, մթերքի արտադրության խթանում: Կարևոր է կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնման, արտոների արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման միջոցով անասնակերների սեփական արտադրության հնարավորությունների լիարժեք օգտագործում, «Անասնակերի մասին» ԼՂՀ օրենքի մշակումը: Անասնապահներին պետք է ապահովել խորհրդատվությամբ և նպատակային վարկավորման միջոցով անասնապահական առևտրային կազմակերպությունների ձևավորման խթանման ծրագրերի ներկայացում: Ռ-ազմավարության շրջանակներում առաջնային է նաև անասնազվաքանակների հաշվառման բարելավման և համարակալման ու տեղեկատվական համակարգի ձևավորման հիման վրա տոհմային գործի ու անասնաբուծական համակարգի բարելավումը, ինչպես նաև՝ պետական ուղղակի աջակցության ծրագրերի իրականացումը: Անասնազվաքանակի կայունացման տնտեսական հիմքի համար անհրաժեշտ է սեփական կերարտադրության իրական հնարավորությունների ընդլայնումը՝ այդ թվում խտացրած կերի արտադրության ներդրում և խթանում: Դրանից ելնելով՝ մոտակա ժամանակահատվածում կարող է պահպանվել անասնազվաքանակի ավելացման միտումները: Եթե վերը նշված ռազմավարական գյուղատնտեսական ծրագրերը իրականացվեն ճիշտ այնպես,

ինչպես որ նախատեսվում են, ապա գյուղացիական տնտեսությունները կավելացնեն խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, այծերի ու խոզերի գլխաքանակը, քանի որ անգամ եկամտաբերության ցածր մակարդակի պարագայում դրանք ապահովում են զբաղվածության կայուն մարդակ, դրամական հոսքերի սեզոնայնության մեղմացում, թարմ և վերամշակված անասնապահական մթերքների նկատմամբ ներտնտեսային կարիքների բավարարում և բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների առկայություն: Գյուղացիական տնտեսություններում անասնազվաքանակի ավելացմանը կնպաստեն նաև գյուղական համայնքներում ստեղծվելիք կաթի հավաքման և իրացման կառույցները, սպանդանոցները, արտավայրերի բարելավման ծրագրերը և դաշտային կերարտադրության զարգացումը: Անասնապահական մթերքների արտադրության ուղղվածություն ունեցող առևտրային կազմակերպությունները նույնպես կավելացնեն թռչունների, խոզերի և խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որովհետև համեմատաբար խոշոր տնտեսություններն ունեն տոհմային ուղղվածություն, թարմ իրացումից բացի՝ նաև վերամշակման հնարավորություններ:

Արցախի հանրապետության պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը կնպաստի նաև մեղվաբուծության և ձկնաբուծության զարգացումը: Այդ նպատակի համար ավելի կընդլայնվի մեղվաբույծներին խորհրդատվական և տեխնիկական աջակցության ցուցաբերումը, մեղվաբույծների հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ ոլորտի օրենսդրական կարգավորման, մեղրի և նրա հետ առնչվող ապրանքների արտահանման գործընթացների սկիզբը: Ձկնաբուծության ոլորտի ընդլայնման ուղղությամբ աշխատանքներ կտարվեն ձկնաբուծական արտադրանքի ավելացման ներքին շուկան բավարարելու ուղղությամբ: Խորհրդատվությամբ և նպատակային վարկավորման միջոցով առևտրային կազմակերպությունների ձևավորմանն աջակցելը՝ անասնապահական ճյուղի նախընտրելի մասնագիտացմանը համապատասխան, ևս կարևոր նախապայման է: Հիմք ընդունելով վերոնշյալ գերակայությունները և զարգացման միտումները՝ կանխատեսվել են անասնաբուծության հիմնական ցուցանիշները: Կանխատեսվող մակարդակի ապահովման ռազմավարական ուղղություններն են. համալիր միջոցառումների իրականացում, որոնց նպատակն է տոհմային գործի զարգացումը: Գյուղատնտեսության բնագավառում իրականացված վերափոխումներին հաջորդող ժամանակահատվածում տոհմային գործի անտեսման և արհեստական սերմնավորման ծավալների զգալի կրճատման արդյունքում հանրապետության պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի պահպանությունը վտանգվել է, տեղի է ունեցել հետադարձ տրամախաչում և, հատկապես, խոշոր եղջերավոր անասունների տոհմային հատկանիշները վատացել են: Տոհմային գործի զարգացման նպատակով նախատեսվում են տոհմային գործի զարգացմանը միտված՝ երկարաժամկետ նպատակային ծրագրի մշակում և իրացում, հանրապետության պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանության և սելեկցիոն նպատակներով դրանց օգտագործում, արհեստական սերմնավորման ենթակառուցված անասնազվաքանակի ավելացում և դրա արդյունքում սերնդատվության ցուցանիշների և մատողաչի տոհմային հատկանիշների բարելավում:

Ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի գյուղատնտեսության հիմնական դիմագծերից ամենակարևորը գյուղացիական տնտեսությունների փոքրությունն ու կտրտվածությունն է: Ընդունված է ասել, որ Արցախյան գյուղատնտեսության մեջ առաջացած բոլոր խնդիրները կապված են հենց փոքրության, կտրտվածության հետ: Ակնհայտ է, որ տնտեսությունների փոքրությունը խոչընդոտում է տնտեսապես արդյունավետ ծավալների, կայուն որակի արտադրանքի ապահովմանը, նրանց վերահսկողության կազմակերպմանը, առանձնապես դժվարացնում է բերքահավաքի, փոխադրման և պահեստավորման արդյունավետ կազմակերպումը, որոնք ընդունված է անվանել լոգիստիկ դժվարություններ: Փոքր տնտեսությունները հաճախ մեծ վնասներ են կրում բերքահավաքի ժամանակ՝ պահեստավորման կամ վերամշակման կարողությունների բացակայության կամ անբավարար լինելու պատճառով: Արդյունքում ստեղծված է այն իրավիճակը, որ փոքր տնտեսությունների խոշոր բանակը կախվածության մեջ է ընկնում մի քանի խոշոր վերամշակողներից, թուլանում է բանակցային գործընթացը ներքին և արտաքին շուկայում և արտադրանքը վաճառվում է ոչ շահավետ գնով, իսկ որոշ դեպքերում իրենց ինքնարժեքով: Մեծաթիվ փոքր և անջատ տնտեսությունների առկայությունը լրջորեն դժվարացնում է նաև նոր տեխնոլոգիաների ու հմտությունների կիրառման և տարածման գործընթացը: Եվ այս ամենը չի կարող չազդել արտադրողականության, արտադրանքի որակի, հետևաբար նաև գյուղարտադրանքի ցածր մրցունակության վրա:

Նշված խնդիրները անկասկած կապ ունեն տնտեսությունների փոքրության հետ: Սակայն եթե հաշվի առնենք միջազգային փորձը և մի հայացք գցենք Արցախի գյուղատնտեսական շուկայի վրա, կարելի է նկատել, որ այդ խնդիրների մեծ մասի պատճառը ոչ թե տնտեսությունների փոքրությունն է, այլ դրանց միջև համագործակցության թուլությունը կամ բացակայությունը: Ստացվում է, որ փոքրության և թույլ համագործակցության համակցությունն է, որ դառնում է նշված խնդիրների պատճառ, կամ, ինչպես ասում են, գյուղատնտեսության զարգացումը զսպող սահմանափակում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ փոքրության հետ կապված խնդիրների զգալի մասը կարելի է լուծել գյուղատնտեսության միջև արդյունավետ համագործակցության, կամ, ինչպես ընդունված է ասել, կոոպերացիայի միջոցով: Ի դեպ, համագործակցությունը չպետք է դիտել որպես ինքնանպատակ: Այն պետք է բխի կարիքից և ուղղված լինի որոշակի խնդիրների լուծմանը:

Հոլանդական կամ Շվեդական ֆերմերների փորձը ցույց է տվել, որ առողջ համագործակցությունը պահանջում է նաև ինքնուրույն մտածելակերպ և հույսն առաջին հերթին սեփական ուժերի վրա դնելու վարքագիծ [5]: Դա նշանակում է, որ առաջացած ցանկացած խնդրի դեպքում պետք է ոչ թե դիմել գյուղատնտեսության կամ շրջվարչակազմին, այլ տեսնել, թե նման իրավիճակում հայտնված հարևան ֆերմերն ինչպես է վարվում և փորձել համատեղ լուծել այն:

Մեր կարծիքով, ինչպես Հայաստանյան, այնպես էլ Արցախյան շուկաներում կան որոշ անկատարություններ, որոնք զգալիորեն զսպում կամ արգելակում են գյուղատնտեսության զարգացմանը: Դրանցից թերևս կարելի է նշել հետևյալը՝

1. Գյուղական համայնքներում չկան պահեստավորման և նախնական վերամշակման բավարար կարողություններ: Փոքր արտադրողները չունենալով բերքը և մթերքը (ցորեն, խաղող, կաթ և այլն) հավաքելու ու պահեստավորելու հնարավորություններ, ստիպված են լինում դրանք էժան գներով վաճառել:

2. Շուկայի աշխատանքի վրա ազդում է նաև սննդամթերքների անվտանգության և որակի ստանդարտների թերի ներդրումը, քիչ ուշադրություն է դարձվում արտադրանքի որակի որոշ կարևոր ցուցանիշներին: Օրինակ՝ կաթի շուկայում հիմնվում են կաթի յուղայնության վրա, անտեսելով ասեմբլ հակաբիոտիկների առկայությունը, որը ազդում է գնագոյացման վրա: Կամ խաղողի շուկայում հաշվի է առնվում բերքատվությունը և քաղցրությունը, անտեսելով գինի ստանալու համար նրա մեջ պարունակող այլ որակներ: Մեր կարծիքով անհրաժեշտ է ներդնել գնագոյացման նոր համակարգ, առանց որի այս ոլորտում անհնար կլինի հետագա որակական զարգացում ապահովելը:

3. Շուկայի գործունեությունը տուժում է փոքր թվով խոշոր վերամշակող գործարարների դիրքի չարաշահման պատճառով: Դա առավել նկատելի է հացահատիկի, եգիպտացորենի, խաղողի մթերման և վերամշակման ոլորտներում: Նրանք գներ են թելադրում և կիրառում արտադրողների համար ոչ ձեռնտու ընթացակարգեր:

Այսպիսով՝ հիմք ընդունելով մեր կողմից կատարված վերոհիշյալ նկատառումները, հատկանշվել են Արցախի գյուղատնտեսության զարգացումը զսպող հետևյալ սահմանափակումները.

1. փոքր տնտեսությունների գերակշռություն, որին համակցում է շատ թույլ համագործակցություն, իսկ որոշ դեպքերում անգամ այն բացակայում է:
2. նշված ոլորտում ընդգրկված մասնակիցների գիտելիքների և հմտությունների պակաս
3. շուկայական ենթակառուցվածքի աշխատանքի անկատարություններ
4. ներդրումների ցածր մակարդակ

Ամփոփելով վերոհիշյալները՝ նշենք, որ ՄԱԿ-ի տվյալներով ներկայումս աշխարհում կան գյուղվթերքներ արտադրող 570 մլն. փոքր տնտեսություններ, ընդ որում յուրաքանչյուր 10 տնտեսություններից 9-ը ընտանեկան է: Հետևաբար ընտանեկան տնտեսությունը դառնում է գյուղատնտեսության վարման գերիշխող ձև, դառնալով նաև վճարող գործակալ կայուն պարենային ապահովությունն ու սովի վերացմանն ուղղված բարեփոխումներում: Հենց ընտանեկան տնտեսություններում է արտադրվում աշխարհի պարենի 80%-ը, և դա կենսական դերակատարում ունի մոտ 800 մլն. սովից տառապող մարդկանց պարենային հիմնախնդրի լուծման գործում:

Մենք առաջարկում ենք, որպեսզի կառավարությունը կանոնակարգման և աջակցության նոր մեխանիզմներ մշակի ու ներդնի, որը կօգնի հաղթահարել և նվազագույնի հասցնել գյուղատնտեսության ոլորտում արտադրությանն ու մթերմանը խոչընդոտող սահմանափակումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Է. Խ., Գյուղատնտեսության ոլորտն Արցախ-Ղարաբաղում, Երևան, 2010թ., էջ 316
2. Գրիգորյան Ա. Վ., Հողային ռեսուրսների օգտագործման խնդիրները ԼՂՀ-ում, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2011թ., էջ 528
3. Հակոբյան Գ. Ա., Գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուները և հիվանդությունները ու նրանց դեմ պայքարի միջոցները, Երևան, 2010թ., էջ 214
4. Մինասյան Մ.. Տնտեսական բարեփոխումների տրամաբանությունը և փուլերը ԼՂՀ-ում, Երևան, 2002թ., էջ 75-78
5. Коваленко Н. Я., Экономика сельского хозяйства, Москва, 1999г, ст. 198
6. www.minagro.nkr.am
7. www.stat-nkr.am

Տեղեկություններ հեղինակի մասին՝
Գրիգորյան Անահիտ Վլադիմիրի,
ա.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ
srbuhi.tovmassian@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկիայի անդամ, աշխ. գ. դ., Ա.Ռ. Ավագյանը: